



Project funded by  
EUROPEAN UNION



Հունիս, 2021

Անմիջապես հրապարակման համար

## Մամլո հաղորդագրություն

**Սևծովյան կանանց ձեռներեցության կապ. կանանց հզորացում  
զբոսաշրջության միջոցով (WETOURL – BSB1030)**

**«Կանանց հզորացում զբոսաշրջության միջոցով»**

Մամլո հաղորդագրություն՝ WETOURL նախագծի մեկնարկը  
Վայրը՝ Սև ծովի ավազան (Հունաստան, Վրաստան, Բուլղարիա, Հայաստան,  
Թուրքիա)

Գործընկերներ՝ SEGE, GAWB, BAA, ARMECAS, KAGIDER

Ժամանակահատվածը՝ 26/06/2021 – 25/06/2023

Հենց նոր մեկնարկեց **ENI CBC Black Sea Basin 2014-2020** ծրագրի կողմից երբևէ  
ֆինանսավորված ամենահետաքրքիր նախագծերից մեկը՝ ուղղված  
զբոսաշրջության ոլորտում կանանց հզորացմանը: **WE TOUR – «Սևծովյան կանանց  
ձեռներեցության կապ. կանանց հզորացում զբոսաշրջության միջոցով»** նախագիծը  
նպատակ ունի ստեղծել անդրսահմանային բիզնես ցանց Սև ծովի ավազանի  
տարածքում՝ ամրապնդելով, աջակցելով և զարգացնելով կանանց  
ձեռներեցությունը զբոսաշրջության միջոցով և տրամադրելով կանանց նոր  
տնտեսական և սոցիալական հնարավորություններ:

### Դժվարությունները

Կանանց ձեռներեցությունը գլոբալ բիզնես միջավայրում զարգացող ոլորտ է՝  
իրական շարժիչ ուժ այսօրվա ժամանակակից տնտեսության մեջ: Նրանք ձևավորում  
և վերախմաստավորում են աշխատավայրը, բիզնես ցանցերը, ֆինանսական  
հաստատությունները և մշակույթը, սակայն Սևծովյան տարածաշրջանում ներկայացնում  
են չօգտագործված ներուժ: Չնայած գենդերային հավասարությանը  
պաշտոնապես աջակցելու Արևելյան Եվրոպայի երկարաժամկետ ավանդույթին՝  
Սևծովյան ավազանի տարածքում դեռևս առկա է գենդերային անհավասարություն  
դեկավարության, որոշումների կայացման, կրթության և տնտեսական ու սոցիալական  
կյանքում կանանց դիրքի վատթարացման ոլորտում: Սոցիալ-մշակութային

Common borders. Common solutions.



Project funded by  
EUROPEAN UNION



սահմանափակումները կրճատել են կանանց հասանելիությունը բովանդակալից բիզնես փորձառությանը և հանգեցրել են կարիերայի ընդհատմանը՝ ընտանեկան պարտավորությունների պատճառով: Ավելին, կանայք ավելի քիչ մարդկային կապիտալ ունեն իրենց բիզնեսի կառավարման և զարգացման համար: Տարածաշրջանի ձեռներեցների միայն 32%-ն են կանայք, և հնարավորությունները վատնվում են այն ժամանակ, երբ կայուն տնտեսական աճը Եվրոպայի բոլոր կառավարությունների օրակարգում է:

Ընդհանուր առմամբ, ձեռներեցությունը դիտվում է որպես տնտեսական հաջողության հիմնական շարժիչ ուժ, սակայն կանանց ուղղված համակարգված նախաձեռնությունները քիչ են: Հետազոտությունները ցույց են տալիս, որ զբոսաշրջությունը դարձել է եկամտի հիմնական աղբյուրներից մեկը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում, որի բիզնեսի ծավալները հավասար են կամ գերազանցում են նավթի արտահանմանը, սննդի կամ ավտո արդյունաբերությանը: Ապացուցված է, որ ճանապարհորդությունը և զբոսաշրջությունը կանանց հզորացման ավելի շատ հնարավորություններ են տալիս այլ ոլորտների համեմատ՝ ոլորտին տալով ավելի մեծ պատասխանատվություն կանանց առաջընթացի համար:

Սև ծովի շրջակայքում գտնվող երկրներն օգտագործում են քաղաքականության շատ տարբեր գործիքներ և նախագծեր՝ կին ձեռներեցների թիվը մեծացնելու համար: Քիչ երկրներ են որդեգրել հստակ քաղաքականություն՝ խրախուսելու կանանց՝ սկսել իրենց սեփական բիզնեսը կամ դառնալ ավելի հավակնոտ: Ընդհանուր առմամբ, կանայք քիչ են ներկայացված բարձր աճի ոլորտներում, և նրանք ունեն ավելի քիչ աշխատողներ, քան տղամարդիկ:

### Լուծումը

**Սևծովյան տարածաշրջանը Եվրասիայի ամենամեծ զբոսաշրջային տարածքներից մեկն է:** Զբոսաշրջության արդյունաբերությունն այսօր եկամուտների աղբյուր է հանդիսանում սևծովյան երկրների մեծ մասի համար: Սև ծովը ձևավորվում է որպես միասնական տարածաշրջան և գրավիչ զբոսաշրջային վայր ոչ միայն օտարերկրյա այցելուների, այլև իր տարածքի բնակիչների համար: BSB երկրները գրավում են համաշխարհային զբոսաշրջության գրեթե 12%-ը կամ ավելի քան 106 միլիոն զբոսաշրջիկ: Տարածաշրջանային համագործակցության ներուժի համար կարևոր է դառնում վերջին տարիների ներտարածաշրջանային զբոսաշրջային հոսքերի արագ աճը, միտում, որը չկար 1990-ականներին: Սևծովյան տարածաշրջանն ունի շատ հարուստ պատմամշակութային ժառանգություն, բայց այնքան էլ հայտնի և գրավիչ չէ որպես զբոսաշրջային ուղղություն:



Project funded by  
EUROPEAN UNION



Տարածաշրջանը համեմատաբար թույլ է զարգացած հատկապես համաեվրոպական այլ զբոսաշրջային գոտիների համեմատ: Կայուն զարգացման առջև կանգնած են այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են ենթակառուցվածքների բացակայությունը, ծառայությունների ցածր որակը և զբոսաշրջության ոլորտում ցածր զբաղվածությունը, հատկապես կանանց համար: Զբոսաշրջության օպերատորները և գործակալները, որոնք տեղակայված են ավելի քիչ հանրաճանաչ դեստինացիաներում, բախվում են իրենց դեստինացիաների արդյունավետ և նպատակային գովազդման մարտահրավերին: Արժեքային շղթայում առկա և պոտենցիալ շահագրգիռ կողմերի ձեռնարկատիրական հմտությունների և կարողությունների բացակայությունը (S2S գործիքների օգտագործում, ցանցային կապ, ռազմավարական մտածողություն, նորարարական բիզնես մոդելների նախագծում և այլն) խոչընդոտում է ավելի կայուն և տնտեսապես կենսունակ մոտեցման հաստատմանը՝ տարածաշրջանը որպես թե՛ զբոսաշրջային ուղղություն գովազդելու համար:

WE TOUR նախագիծը սերտորեն կապված է ծրագրի տարածաշրջանի ընդհանուր մարտահրավերների հետ: Մասնակից կազմակերպությունները պատրաստվում են ամուր գործընկերություն ստեղծել կանանց ձեռներեցության ոլորտում ոչ միայն իրենց, այլ նաև իրենց ներկայացրած երկրների միջև: Բացի այդ, WETOOR-ի հիմնական խնդիրներն են՝ գենդերային հավասարության խթանումը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական իշխանությունների հետ համագործակցությամբ և գիտելիքի փոխանցումը ծրագրի նպատակներին առնչվող սեմինարների կազմակերպման միջոցով:

Ծրագիրը ներառում է 5 գործընկեր 5 տարբեր երկրներից՝ գործարար կանանց չորս ասոցիացիաներ՝ Հունաստանից, Բուլղարիայից, Վրաստանից և Թուրքիայից և զբոսաշրջության մեկ ասոցիացիա Հայաստանից: Յուրաքանչյուր գործընկեր ունի տարբեր դերակատարում գործարար հատվածում և տարբեր պարտականություններ՝ ծրագրի իրականացման ընթացքում: Ծրագրի գործընկերները կմիավորեն ջանքերը՝ զարգացնելու նորարարական ձեռնարկատիրական շրջանակը՝ զբոսաշրջության զարգացման և Սևծովյան մակրոշրջանի՝ որպես գրավիչ զբոսաշրջային վայրի առաջնության նպատակով:

Գործընկերությունը հիմնականում կիրականացնի անդրսահմանային ազդեցություն ունեցող նմանատիպ գործողություններ: Անդրսահմանային համագործակցությունը շատ կարևոր է, քանի որ այն կանանց կտրամադրի այդ ոլորտում արդեն իսկ իրականացված հաջող քաղաքականությունը և լավագույն փորձը՝ նրանց ձեռներեցությունը և զբաղվածությունը խթանելու համար:

**Common borders. Common solutions.**



Project funded by  
EUROPEAN UNION



WE TOUR գործընկերությունը կհասնի իր նպատակներին՝ կիրառելով հետևյալ մոտեցումները.

- խաչաձև արդյունաբերության վրա հիմնված մոտեցում՝ զբոսաշրջության ոլորտում համագործակցության ձևավորմամբ,
- ռազմավարության վրա հիմնված մոտեցում, որը նպաստում է Սևծովյան տարածաշրջանի խթանմանը և կանանց ձեռնարկատիրական հմտությունների բարձրացմանը,
- աշխատանք զբոսաշրջության ոլորտում:

### Արդյունքները

WETOURL նախագիծն աշխատում է կանանց՝ ձեռներեցությանը և զբաղվածությանը մոտեցնելու ուղղությամբ, հետևաբար, ծրագրի հիմնական արդյունքները հետևյալն են.

1. Զբոսաշրջության ոլորտում կանանց ձեռներեցության կարողությունների զարգացում ձեռներեցության, բիզնեսի կառավարման և թվային մարքեթինգի դասընթացների և ծրագրերի մշակման և կազմակերպման միջոցով: Առնվազն 500 կին՝ երիտասարդ մասնագետներ և կին ձեռներեցուներ, կվերապատրաստվեն, թե ինչպես արդյունավետ կառավարեն և զարգացնեն իրենց բիզնեսը, ինչպես ներգրավվեն զբոսաշրջության մեջ և տեղյակ լինեն զբոսաշրջության տեղական ծրագրերի և քաղաքականությունների մասին: Մյուս կողմից, զբոսաշրջության ոլորտում ձեռներեցությունը կխթանվի որպես ինքնազբաղվածության և ապագա կարիերայի զարգացման գործիք:
2. Մեծացնել փորձի փոխանակումը համապատասխան շահագրգիռ կողմերի միջև՝ «WE TOUR» պորտալի ստեղծման միջոցով: Նոր տարածաշրջանային բիզնես ցանցը կստեղծի գիտելիքի փոխանակման գոբալ ցանց: «WE TOUR» պորտալի միջոցով շահագրգիռ կողմերը կփոխանակեն ազգային քաղաքականության տեղեկատվություն կին ձեռներեցուների վերաբերյալ, ինչպես նաև արժեքավոր կոնտակտներ անդրսահմանային այցելությունների և համագործակցության, լավագույն փորձի, բիզնեսի կառավարման աջակցության համար: Պորտալը կօժանդակի ապագա համատեղ ջանքերին՝ քննարկելու և մշակելու աշխատանքային մեթոդներն ու գործիքները, որոնք ուղղված են կանանց ձեռներեցության աջակցության բարելավմանը ազգային մակարդակում:
3. Բարելավել կանանց դերը և աջակցել կանանց ձեռներեցությանը BSB ոլորտում՝ իրազեկման բարձրացման քարոզարշավի մշակման միջոցով: Ծրագրի մասին կտեղեկացվի ավելի քան 5000 մարդ:
4. Բարձրացնել կանանց վստահությունը և նրանց բիզնես հմտությունները՝ ստեղծելով ամուր համագործակցային ցանց և երկարաժամկետ գործընկերություն



Project funded by  
EUROPEAN UNION



կանանց աջակցող կազմակերպությունների, բիզնես կազմակերպությունների, պետական իշխանությունների և այլ տեղական շահառուների միջև:

Սևծովյան ավազանի 2014-2020 թթ. համատեղ գործառնական ծրագիր  
SEGE - Հունաստանի կին ձեռներեցների ասոցիացիա

Հուլիս, 2021

«Սևծովյան ավազանի 2014-2020թթ. » համատեղ գործառնական ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից Եվրոպական հարևանության գործիքի միջոցով և մասնակից երկրների՝ Հայաստանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Թուրքիայի և Ուկրաինայի կողմից:

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատվությունը կրում է բացառապես WETOUR նախագիծը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՎԵՐՁ